ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Հով:աննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի հոբելյանական միջոցառումներից էր ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեգյանի անվան դրականության ինստիտուտի կազմակերպած գիտական նստաշրջանը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 11-ին և 12-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում։

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով նստաշրջանը ասաց, որ սա հայ ժողովրդի հոգևոր մշակույթի հիանալի տոներից մեկն է, որ եղբայրական մյուս ժողովուրդների հետ նշում է այսօր հայ ժողովուրդը։ Հոբելյանի կազմակերպման աշխատանքները մի անգամ ևս ցույց տվեցին, թե հովՀաննես Թումանյանը ինչպիսի մեծ տեղ է գրավում հայ գրականության ու արվեստի, հայ ժողովրդի ամբողջ հոգևոր կյանքի մեջ։

Թումանյանը, կարծեք, եկել էր ընդհանրացնելու հայ դրականության հաջողությունները՝ Խորենացուց, Նարեկացուց ու Սայաթ-Նովայից մինչև Աբովյանն ու Ռաֆֆին։ Ստեղծագործել սկսելով անցյալ դարի վերջին տասնամյակում, Թումանյանը մի նոր աստիճանի բարձրացրեց ազգային ավանդույթները և մեկընդմիշտ տեղ դրավեց այդ վսեմապանծ անունների կողքին, դարձավ բազմադարյան հայ դրականության ամենամեծ, ամենալուսավոր և ամենագեղեցիկ աստղը։ Թումանյանը գեղարվեստական մարմնավորում տվեց իր ժողովրդի հոգևոր աշխարհին, նրա ամենարնորոշ, ամենալավ գծերին՝ սոցիալական և ազգային արդարության ձգտումին, հումանիստական տենչին, ապրելու կամքին։ Թումանյանը էլ ավելի մոտեցրեց արվեստը կյանքին, ժողովրդին, իրականության ամենապարզ երևույթներում պոեզիայի անսպառ աղբյուր տեսավ։ Նա իր հանճարը լիովին նվիրաբերեց հարազատ ժողովրդին։

«Թումանյանը և արդիականությունը» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Բ. Աղաբաբյանը։

Թումանյանը,— ասաց նա,— ամբողջ ստեղծագործությամբ կապված է իր ժողովրդի հետ։ Հանդես գալով չափազանց բարդ պատմական մի ժամանակաշրջանում՝ ազգային ողբերգության տարիներին, նա չկորցրեց հավատքը իր ժողովրդի լուսավոր ապագայի նկատմամբ։ Նրա հավատքը մարդու և ժողովրդի հանդեպ անսասան մնաց։ Նա բոլորից լավ գիտեր, որ գրականության դերը անկատար կյանքը վերափոխելն է։

Թումանյանը հայ ժողովրդի կյանքը կապում էր Ռուսաստանի հետ։ Նա հավատում էր ռուս մեծ ժողովրդը ազատագրական միսիային։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանի զեկուցումը նվիրված էր «Ժողովրդի բանաստեղծը և ժողովրդական բանահյուսությունը» թեմային։ Զեկուցողն ասաց, որ Թումանյանի ստեղծագործությունը սերտորեն կապված է ժողովրդական բանահյուսության հետ։ Իր լավագույն երկերում («Սասունցի Դավիթ», «Լուսավորչի կանթեղը», «Քաջ Նազար», «Մի կաթիլ մեղր» և այլն) Թումանյանը բարձրացրել է ազգային և համամարդկային հարցեր։ Գեղարվեստական կենդանի պատկերներով նա ցույց է տվել ժողովրդի ծանր ու հերոսական պայքարը, ապրելու նրա անընկճելի կամքը, գեղեցիկ ապագայի հանդեպ անսասան հավատքը։

Զեկուցողը այնուհետև մանրամասն վերլուծությամբ ցույց տվեց, որ «Սասունցի Դավթիթ» ու «Քաջ Նազարիթ» Թումանյանի կատարյալ մշակումները մինչև այսօր էլ մնում են մեր ազգային էպոսի ու հեքիաթների անգերազանցելի նմուշներ։

Հոթա Ռուսթավելու անվան վրացական գրականության պատմության ինստիտուտի գրական կապերի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ցիցիշվիլին «Թումանյանի հասարակական-գրական կապերը Վրաստանի հետ» իր զեկուցման մեջ ասաց, որ Թումանյանին իրենց հարազատն են համարում վրացիները, և նրա ստեղծագործություններով կարող է հպար-

ոանալ ամեն մի ժողովուրդ։ Նրա բանաստեղծությունները, պոեմներն ու հեքիաթները, որ հայ ժողովրդի ձգտումներն են արտահայտում, չխամրող հետք են թողնում յուրաքանչյուր ընթերցողի սրտում։ Թումանյանը վրացիների համար ոչ միայն մեծ գրող էր, այլև մեծ բարեկամ, վրացական գրական-հասարակական կյանքի ակտիվ մասնակից։

«Թումանյանի ստեղծագործությունների վրացերեն թարգմանությունները» թեմայով զեկուցեց նույն ինստիտուտի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Բ. Արվելաձեն։ Նա նշեց, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին Թումանյանի ստեղծագործությունների վրացերեն թարգմանության ուղղությամբ։ Նա ցույց տվեց թարգմանությունների հաբաղատությունը բնագրին։

Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ Նիզամու անվան լեզվի և գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Թ. Ախմեդովը «Թումանյանը ադրբեջաներեն» զեկուցման մեջ ասաց, թե հայ մեծ բանաստեղծը ինչպիսի ժողովրդականություն է վայելում ադրբեջանցի ընթերցողների մոտ և խոսեց ադրբեջաներեն թարգմանությունների մասին։

«Մարդը և աշխարհը Թումանյանի երկերում» զեկուցմամբ հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ս. Սարգսյանը։ Նա այն տեսակետն էր արծարծում, որ քառյակները լինելով Թումանյանի գրական կյանքի վերջին արտահայտումները, միաժամանակ տրամաբանորեն ավարտում են նրա ամբողջ ստեղծագործությունը, միասնություն բերում նրա ըմբռնումները աշխարհի և մարդու մասին։ Աշխարհը Թումանյանը ներկայացնում է աստիճանաձև, սկսած նրա ստորին արտահայտումներից մինչև ամենաբարձր, տիեզերական արտահայտումները։ Նրա իդեալն էր տեսնել մարդկանց հասած այդ բարձունքներին։

«Հովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում» զեկուցման մեջ, բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Մ. Կարապետյանը ցույց տվեց, թե ինչպես են բացահայտվում մեծ բանաստեղծի ու մարդու կենսագրության բազմաթիվ մանրամասներ, որոնք օգնում են ավելի ամբողջական պատկերացում կազմելու Թումանյանի մասին, հնարավորություն են ընձեռում ավելի ճիշտ ըմբռնելու ստեղծագործության որոշ հարցեր։

Բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Դանիելյանը զեկուցեց «Թումանյանի արձակի գեղարվեստական մի քանի առանձնահատկությունների մասին»։ Նա ասաց, որ Թումանյանը ստեղծեց գյուղացիական Հայաստանի պատմական, սոցիալական և հոգևոր կենսագրության գեղարվեստական նկարագիրը։ Ժողովրդական բառ ու բանի, իմաստախոհության, մտածողության եղանակների համակարգը իր բազմազանությամբ ոչ ոք չկարողացավ այնպես խոր յուրացնել և դնել գեղարվեստական կատարյալ ձևերի մեջ, ինչպես Թումանյանը։

Բանաստեղծ Պարույր Սևակը զեկուցեց «Թումանյանի մեծությունը» թեմայով։ Նա խոսեց Թումանյանի անգնահատելի ծառայության մասին հայ գրականությանը, այն մասին, որ նրան ամենից ավելի է սիրում ժողովուրդը, և դա այն պատճառով, որ Թումանյանը բոլորից ավելի խոր է թափանցել ժողովրդի հոգեկան աշխարհը, ըմբռնել նրա խոհերն ու ձգտումները և այդ ամենը գեղարվեստական անգուգական վարպետությամբ մարմնավորել է ստեղծագործություններում։

«Թումանյանի դրամատուրգիական փորձերը» խորագիրն էր կրում բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մ. Ինճիկյանի զեկուցումը։ Զեկուցողը նշեց, որ մեծ բանաստեղծի ստեղծագործության ժանրային բազմազանությունը — պոեմ, բալլադ, առակ, լիրիկական բանաստեղծություն, քառյակ, պատմվածք, հեքիաթ,— վկայում են նրա կյանքի գեղարվեստական ընկալման հարստությունը։

Թումանյանն ուշագրավ փորձեր է կատարել նաև դրամատուրգիայի բնագավառում, նախանշելով է դրել պատմական ողբերգություններ՝ «Արտավազդ Բ», «Հովհաննես Թագավոր», ինչպես և դրամաներ ժամանակակից կյանքից՝ «Համլիկ», «Խավարի մեջ» և «Միայնակ աղջիկ»։ Դրամատիկական այդ երկերից մեր ձեռքն են հասել առանձին տեսարաններ, հատվածներ, գրառումներ, նյութեր։

Իրենց արծարծած հարցերով, գաղափարներով Թումանյանի դրամատիկական ֆրագմենտները լրացնում են բանաստեղծի ստեղծագործական դիմանկարը՝ մասնավորապես 90-ական թվականներին։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Թ. Ավդալբեգյանի զեկուցումը նվիրված էր «Թումանյանը և հայ հին գրականությունը» թեմային։ Նա ցույց տվեց, որ հայ հին գրականությունը Հովհաննես Թումանյանի համար եղել է և՛ ստեղծագործական գանձարան, և՛ հոգեհարազատ մշակույթ։

«Թումանյանի ռեալիզմը» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Մ. Ջրբաշյանը։ Զեկուցողը բնութագրեց Թումանյանի տեղը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ գրական ուղղությունների փոխադարձ պայքարի և ներգործության մթնոլորտում։ Սկզբից ևեթ հետևելով կյանքի ռեալիստական պատկերման սկզբունքներին, Թումանյանը իր ստեղծագործության մեջ ընդունեց նաև մյուս գրական մեթոդների, մասնավորապես առաջավոր ռոմանտիզմի նվաճումները։ Զեկուցման մեջ հանգամանորեն խոսվեց նաև Թումանյանի ստեղծագործական համակարգում պայմանական, ֆանտաստիկ և հիպերբոլիկ պատկերների դեղարվեստական նշանակության մասին։

*

Սեպտեմբերի 9-ին էջմիածնում տեղի ունեցավ ինստիտուտի գիտական սեսիան նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին։ Զեկուցումներով հանդես եկան բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ս. Սարգսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը։

*

Սեպտեմբերի 13-ին Կիրովականում տեղի ունեցավ Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական սեսիա։ Ինստիտուտի դիրեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Ս. Նալբանդյանի բացման խոսքից հետո զեկուցումներ կարդացին Ա. Տ. Ղանալանյանը, Ս. Բ. Աղաբաբյանը, Է. Մ. Ջրբաշյանը և Գ. Ցիցիշվիլին։

ԹԱՏԵՐԱԳԵՏԻ ՎԱՍՏԱԿԸ

Հայաստանի գիտական և թատերական հասարակությունը նշում է Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ականավոր թատերագետ Սարգիս Մելիքսեթյանի ծննդյան 70-ամյակը։

Իր գիտական-հասարակական եռանդուն գործունեությունն սկսելով Հայաստանում Սովետական կարգերի ստեղծման առաջին իսկ օրերից, Սարգիս Մելիքսեթյանն անցել է սովետահայ մշակութային գործչի փառավոր ուղի։

1921—1930 թթ. ընթացքում նա վարել է պետական, պրոֆմիութենական պատասխանատու պաշտոններ, հանդես է եկել որպես գրող և ժուռնալիստ։

1930 թ. նա ստանձնում է նորաստեղծ Հայկինոյի սցենարական բաժնի ղեկավարի պաշտոնը, այն վարում է շուրջ հինգ տարի և նպաստում այնպիսի բարձրորակ գեղարվեստական և փաստագրական կինոնկարների ստեղծմանը, ինչպիսիք են «Պեպո», «Զանգեզուր», «Գիքոր», «Խազփուշ», «Մեքսիկական դիպլոմատներ», «Սև թևերի տակ», «Սովետական Հայաստան», «Հայաստանի ջրերը» և այլն։

Հաջորդ տարիներին Ս. Մելիքսեթյանը ղեկավարում է հանրապետության արվեստի գործերի վարչության թատերական բաժինը և ապա դառնում նույն վարչության գլխավոր խորհրդատու՝ դրամատուրգիայի գծով, մեծ չափով նպաստելով մեզանում դրամատուրգիայի զարգացմանը և հանրապետության թատրոնների խաղացանկի թարմացմանը։

Այս շրջանից սկսած՝ Ս. Մելիքսեթյանի անունը անխզելիորեն կապված ենք տեսնում մեր ժողովրդի թատերական արվեստի հետ։ Նա կենտրոնական մամուլում հանդես է գալիս որպես թատերական լուրջ քննադատ, առանձին գրքերով հրատարակում մի շարք ծավալուն թատերագիտական աշխատություններ՝ «Երևանի պետթատրոնը» (1934 թ. Ե. Չարենցի խմբագրությամբ), «Путь нашего театра» (1941), «Թատերական ակնարկներ» (1945), «Հովհաննես Աբելյան» (1954), որոնցում հայ թատերագիտության մեջ առաջին անգամ ամբողջ խորությամբ վեր է հանում և արժեքավորում հայ բեմի խոշոր վարպետներ Հովհաննես Աբելյանի, Վահրամ Փափազյանի, Մկրտիչ Ջանանի, Ամո Խարազյանի, Արուս Ոսկանյանի, Օլգա Դուլազյանի, Ավետ Ավետիսյանի և այլոց վաստակը, գիտական բարձր մակարդակով հանրագումարի ենթարկում մեր թատրոնի առաջին տասնամյակների նվաճումները։

Հայ թատերագիտության մեջ լուրջ ներդրում էր Ս. Մելիքսեթյանի 1960 թ. լույս ընծայած «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության» աշխատությունը, որտեղ լայն կտավի վրա, իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ, հեղինակը ցուցադրում է սովետահայ թատրոնի զարգացման ողջ պատմությունը, անդրադառնում Հայաստանի քաղաքներում և եղբայրական հանրապետություններում ծավալված թատերական եռուն կյանքի հիմնական փուլերին։